Կարգապահական գործ ԿԳ-14100

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի փետրվարի 2-ի թիվ 34-րդ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ ԿԳ/30-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԳԵՈՐԳԻԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ), նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարդարյանի, Լուսինե Սահակյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Երվանդ Վարոսյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ դիմող Միքայել Կուրղինյանի, վերջինիս ներկայացուցիչ՝ փաստաբան Վահագն Մարտիրոսյանի (արտոնագիր թիվ 1486) և պատասխանող փաստաբան Տիգրան Սահակյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Սահակյանին (արտոնագիր թիվ 1530) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ՝

<u>1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

Քաղաքացի Միքայել Կուրղինյանը (այսուհետ՝ Դիմող)՝ դիմելով Պալատ հայտնել է, որ 25.06.2013թ. ԼԻՍԱՄ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի հիման վրա փաստաբան Տիգրան Սահակյանին տրվել է լիազորագիր՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵԱՔԴ/2573/02/11, ԵԱՔԴ/1492/02/12, ԵԱՔԴ/1319/02/13 քաղաքացիական գործերով Միքայել և Անահիտ Կուրղինյանների շահերը ներկայացնելու համար:

Դիմողը հայտնել է, որ վերոնշյալ քաղաքացիական գործերով բոլոր

դատավարական փաստաթղթերը ստորագրվել են Միքայել և Անահիտ Կուրղինյանների կողմից, սակայն դրանք կազմվել և համապատասխան դատարաններ մուտք են արվել փաստաբան Տիգրան Սահակյանի կողմից:

Դիմողը նշել է, որ փաստաբան Տիգրան Սահակյանի ոչ պրոֆեսիոնալ գործողությունների (անգործության) հետևանքով զրկվել է իր իրավունքների դատական պաշտպանության համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր հնարավորություններից:

Դիմողը տեղեկացրել է, որ թիվ ԵԱՔԴ/2573/02/11 և թիվ ԵԱՔԴ/1492/02/12 քաղաքացիական գործերով փաստաբան Տիգրան Սահակյանի կողմից բաց են թողնվել վերաքննիչ բողոք բերելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներն, ինչի արդյունքում Դիմողն ու Անահիտ Կուրղինյանը զրկվել են իրենց իրավունքների պաշտպանության միջոցներից:

Դիմողը հայտնել է նաև, որ իրավաբանությունից հեռու լինելու պատճառով 22.01.2014թ. ստորագրել է փաստաբանի կողմից ներկայացված համաձայնագիրն, ըստ որի՝ Դիմողը, որպես պատվիրատու, Պայմանագրին առնչվող ու դրանից բխող ցանկացած հարցերի հետ կապված որևէ պահանջ չունի փաստաբանի նկատմամբ (4-րդ կետ):

Դիմողը խնդրել է ձեռնարկել համապատասխան միջոցներ փաստաբան Տիգրան Սահակյանին պատասխանատվության ենթարկելու համար:

<u>2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

15.07.2014թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 266-Ա/ԿԳ-1410 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Տիգրան Գեորգիի Սահակյանի նկատմամբ՝ Կանոնագրքի 2.7.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը 22.07.2014թ. հանձնվել է Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, փաստաբան Մարինե Թովմասյանին:

<u>3. Դիմողի և Պատասխանողի բացատրությունները.</u>

<u>3.1. Դիմողի բացատրությունները.</u>

Դիմողը փաստաբան Տիգրան Սահակյանին մեղադրում է առերևույթ հետևյալ վարքագիծը դրսևորելու մեջ.

- փաստաբան Տիգրան Սահակյանը թիվ ԵԱՔԴ/2573/02/11 և թիվ ԵԱՔԴ/1492/02/12 քաղաքացիական գործերով բաց է թողել վերաքննիչ բողոք բերելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետները.

- փաստաբան Տիգրան Սահակյանը թիվ ԵԱՔԴ/2573/02/11 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետի խախտմամբ վերաքննիչ բողոք է բերել Միքայել և Անահիտ Կուրղինյանների՝ որպես գործին մասնակից չդարձված անձանց անունից, մինչդեռ վերջիններս գործի

քննությանը ներգրավված են եղել որպես պատասխանողներ, ինչն այլ դատավարական կարգավիճակ է, որից բխում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված որոշակի իրավունքներ և պարտականություններ, մասնավորապես՝ վերաքննիչ բողոք բերելու համար նախատեսված է մեկամսյա ժամկետ, այլ ոչ եռամսյա, ինչպիսի ժամկետ սահմանված է միայն գործին մասնակից չդարձված անձանց դեպքում, մինչդեռ Դիմողը թիվ ԵԱՔԴ/2573/02/11 քաղաքացիական գործով հանդիսացել է պատասխանող:

Փաստաբան Տիգրան Սահակյանի ոչ պրոֆեսիոնալ գործողությունների (անգործության) հետևանքով Դիմողը կորցրել է իր իրավունքների դատական պաշտպանության ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր հնարավորությունները:

<u>3.2. Պատասխանողի բացատրությունները.</u>

Պատասխանողը 01.08.2014թ. սույն կարգապահական գործը նախապատրաստող փաստաբան Մարինե Թովմասյանին է ներկայացրել տեղեկանք՝ պատվիրատու Միքայել Կուրղինյանի և կատարող «Լիսամ» ՍՊԸ-ի, ի դեմս տնօրեն Տիգրան Սահակյանի, միջև 25.06.2013թ. ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման և դրա շրջանակներում թիվ ԵԱՔԴ/1492/02/12 և թիվ ԵԱՔԴ/2573/02/11 քաղաքացիական գործերով, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի շրջանակներում կատարված գործողությունների վերաբերյալ:

Պատասխանողը 17.12.2014թ. ՀՀ Փաստաբանների պալատի խորհրդին է ներկայացրել նաև միջնորդություն՝ կարգապահական վարույթը կարճելու վերաբերյալ՝ նշելով հետևյալը.

Այսպես. Վկայակոչելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը՝ Պատասխանողը նշել է, որ սույն վարույթի հարուցման առիթը Մ.Կուրղինյանի կողմից 17.06.14թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին ուղղված դիմումն է:

Սույն վարույթը հարուցվել է նույն օրենքի 39.3 հոդվածի 1-ին մասով սահմանված 1-ամսյա ժամկետի պահպանմամբ՝ առիթն առաջանալու օրվանից մեկ ամիսը չլրացած՝ 15.07.2014թ.:

Իսկ համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.3 հոդվածի 3-րդ մասի՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Մ.Կուրղինյանն իր իրավունքների վերաբերյալ կայացված վճռի գոյության մասին իմացել է 03.06.2013թ.: Այսինքն, դիմումում նշված ենթադրյալ խախտումը(մեկամսյա ժամկետի բացթողումը) փաստաբանի կողմից թույլ է տրվել 03.07.2013թ.՝ մեկամսյա ժամկետում բողոք չբերելով:

Օրենքի վերը նշված նորմի հիմքով, այդ խախտման փաստով փաստաբանի

նկատմամբ կարգապահական վարույթ կարող էր հարուցվել խախտման օրվանից (03.07.2013թ.) մեկ տարվա ընթացքում՝ մինչև 03.07.2014թ., մինչդեռ վարույթը հարուցվել է դիմումը տալու օրվանից օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում, սակայն խախտման օրվանից մեկ տարին լրանալուց հետո՝ 15.07.2014թ.:

Ուստի հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ խնդրել է կարճել կարգապահական վարույթը:

4. Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին

Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, փաստաբան Մարինե Թովմասյանինը հավաքագրել է տվյալ գործին վերաբերող ապացույցները և ուսումնասիրել գործում առկա ապացույցները, որի արդյունքներով կազմել է եզրակացություն, ըստ որի.

«Գտնում եմ, որ սույն կարգապահական գործի շրջանակներում քննարկման առարկան հետևյալն է՝ իր իրավասության շրջանակներում ում շահերի ներկայացման պարտականությունն է ստանձնել փաստաբան Տիգրան Սահակյանը՝ գործին մասնակից չդարձված, թե գործի քննությանը չմասնակցած անձանց և, արդյոք, փաստաբանի գործողությունները բխել են վերը նշված իրավական նորմերի իմպերատիվ պահանջներից:

Վիճարկվող հանգամանքը կայանում է հետևյալում. գործին մասնակից չդարձված և գործի քննությանը չմասնակցած անձինք, արդյոք նույն իրավական կատեգորիան են, թե ոչ, և եթե այո, ապա ինչու է օրենսդիրն երկու տարբեր օրենսգրքերում տվել տարբեր ձևակերպումներ:

ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների համատեքստում «գործին մասնակից չդարձվածներն այն անձինք են, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ», այսինքն անձինք, որոնք ի սկզբանե, որպես կողմ, ներգրավված չեն եղել գործի քննությանը, սակայն նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Իսկ գործի քննությանը չմասնակցած անձ ասելով, հասկանում եմ գործով որպես կողմ ներգրավված, սակայն ինչ-ինչպատճառներով գործի քննությանը չմասնակցած անձ:

Հետևաբար, փաստաբանի գործողությունների իրավաչափությունը գնահատելու և վերջնական որոշում կայացնելու համար, անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել վերը նշված կատեգորիաների տրամաբանական մեկնաբանությունը և դրանից բխող օրենքով նախատեսված գործողությունները, մասնավորապես, բողոքարկման համար նախատեսված ժամկետի բաց թողնված կամ չթողնված լինելը:

Ե Զ Ր Ա Կ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

- *Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետ՝ Փաստաբանը պարտավոր է ազնվորեն և*

բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

- *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*
- *Կանոնագրքի 3.5.5 կետ՝ Փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդի և հանդես գալ նրա անունից:*

Եզրակացության վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

2014 թվականի սեպտեմբերի 18-ին ՀՀ Փաստաբանների պալատի կարգապահական գործը և նախապատրաստողի եզրակացությունը հանձնվել է պալատի Խորհրդին:

Խորհրդի նիստը նշանակվել է 2014 թվականի նոյեմբերի 28-ին ժամը 18:30-ին, որը սակայն հետաձգվել է:

Այնուհետև՝ 2015 թվականի փետրվարի 02-ին, ժամը՝ 18.30-ին, տեղի է ունեցել խորհրդի նիստը ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

<u>5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) 25.06.2013թ. Դիմողի՝ Միքայել Կուրղինյանի և ԼԻՍԱՄ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որի հիման վրա փաստաբան Տիգրան Սահակյանին տրվել է լիազորագիր՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵԱՔԴ/2573/02/11, ԵԱՔԴ/1492/02/12, ԵԱՔԴ/1319/02/13 քաղաքացիական գործերով Միքայել և Անահիտ Կուրղինյանների շահերը ներկայացնելու համար:

2) թիվ ԵԱՔԴ/1492/02/12 քաղաքացիական գործով 29.07.2013թ. ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.08.2013թ. որոշմամբ վերադարձվել է, քանի որ բաց է թողնվել օրենքով սահմանված կարգով բողոքարկման ժամկետը և վերաքննիչ բողոքը չի ուղարկվել Մանյա Ալոյանին:

ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.08.2013թ. որոշման դեմ 23.08.2013թ. բերվել է վճռաբեկ բողոք, որն էլ վերադարձվել է 02.10.2013թ. որոշմամբ՝ տրամադրելով 20-օրյա ժամկետ՝ թերությունները վերացնելու համար:

Թերությունները վերացված տարբերակը 01.11.2013թ. մուտքագրվել է ՀՀ Վճռաբեկ դատարան, որը վերադարձվել է 20.11.2013թ. որոշմամբ:

Միևնույն քաղաքացիական գործով 29.08.2013թ. նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերաքննիչ բողոք է ներկայացվել, որը ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.09.2013թ. որոշմամբ վերադարձվել է:

Նշված որոշման դեմ 23.08.2013թ. բերվել է վճռաբեկ բողոք, որն էլ վերադարձվել է 02.10.2013թ. որոշմամբ՝ տրամադրելով 20-օրյա ժամկետ՝ թերությունները վերացնելու համար:

Թերությունները վերացված տարբերակը 01.11.2013թ. մուտքագրվել է ՀՀ Վճռաբեկ դատարան, որը վերադարձվել է 20.11.2013թ. որոշմամբ:

3) թիվ ԵԱՔԴ/2573/02/11 քաղաքացիական գործով 29.07.2013թ. ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.08.2013թ. որոշմամբ վերադարձվել է , քանի որ բաց է թողնվել օրենքով սահմանված կարգով բողոքարկման ժամկետը:

Նշված որոշման դեմ 23.08.2013թ. բերվել է վճռաբեկ բողոք, որն էլ վերադարձվել է 02.10.2013թ. որոշմամբ՝ տրամադրելով 20-օրյա ժամկետ՝ թերությունները վերացնելու համար:

Թերությունները վերացված տարբերակը 08.11.2013թ. մուտքագրվել է ՀՀ Վճռաբեկ դատարան, որը վերադարձվել է 20.11.2013թ. որոշմամբ:

Միևնույն քաղաքացիական գործով 29.08.2013թ. նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերաքննիչ բողոք է ներկայացվել, որը ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.09.2013թ. որոշմամբ վերադարձվել է:

Նշված որոշման դեմ 23.08.2013թ. բերվել է վճռաբեկ բողոք, որն էլ վերադարձվել է 02.10.2013թ. որոշմամբ՝ տրամադրելով 20-օրյա ժամկետ՝ թերությունները վերացնելու համար:

Թերությունները վերացված տարբերակը 01.11.2013թ. մուտքագրվել է ՀՀ Վճռաբեկ դատարան, որը վերադարձվել է 20.11.2013թ. որոշմամբ:

4) 28.12.2013թ. ՀՀ Սահմանադրական դատարանին է ներկայացվել դիմում՝ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերին ատնչվող որոշ Սահմանադրական նորմեր հակասահմանադրական ճանաչելու մասին, որի քննության ընդունումը 14.01.2014թ. մերժվել է:

<u>6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 02.02.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Տիգրան Գեորգիի Սահակյանի (արտոնագիր 1530, ստացված՝ 14.07.2012թ.) նկատմամբ 2012-2014թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 15.07.2014թ. թիվ 266-Ա/ԿԳ-14100 որոշմամբ հարուցված կարգապահական գործի):

<u>7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Գեորգիի Սահակյանի նկատմամբ հարուցված սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես. սույն կարգապահական վարույթը հարուցվել է 15.07.2014թ., և դրա համար հիմք է հանդիսացել Մ.Կուրղինյանի կողմից 17.06.14թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին ուղղված դիմումը:

Մ.Կուրղինյանն իր իրավունքների վերաբերյալ կայացված վճռի գոյության մասին իմացել է 03.06.2013թ.: Այսինքն, դիմումում նշված ենթադրյալ խախտումը (մեկամսյա ժամկետի բացթողումը) փաստաբանի կողմից թույլ է տրվել 03.07.2013թ.՝ մեկամսյա ժամկետում բողոք չբերելով:

Համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.3 հոդվածի 3-րդ մասի՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:*

Օրենքի վերը նշված նորմի հիմքով, այդ խախտման փաստով փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ կարող էր հարուցվել խախտման օրվանից (03.07.2013թ.) մեկ տարվա ընթացքում՝ մինչև 03.07.2014թ., մինչդեռ վարույթը հարուցվել է դիմումը տալու օրվանից օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում, սակայն խախտման օրվանից մեկ տարին լրանալուց հետո՝ 15.07.2014թ.:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.9. հոդվածի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 15.07.2014թ. թվականի թիվ 266-Ա/ԿԳ-14100 որոշմամբ փաստաբան Տիգրան Գեորգիի Սահակյանի (արտոնագիր թիվ 1530) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական վարույթ հարուցելու օրենքով նախատեսված վաղեմության ժամկետների լրանալու հիմքով:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Տիգրան Գեորգիի Սահակյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

Նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան